Կարծիք

Հարությունյան Լևոն Սուրենի

«Իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգը. Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)»թեմաով

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության **վերաբերյալ**

Լևոն Սուրենի Հարությունյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ազգային իրավունքի աղբյուրների քննական վերլուծությանը:

Քննարկվող թեկնածուական ատենախոսության թեմայի հետզոտության արդիականությունը պայմանավորված է մեզանում ընթացող դատաիրավական և սահմանադրական բարեփոխումների գործընթացներով:Այդ բարեփոխումները ենթադրում են նորովի իմաստավորել իրավունքի համակարգի բովանդակությունը և իրավունքի աղբյուրների առանձնահատկությունները իրակարգավորումների ոլորտում:

Այս առումով, պատահական չէ, որ արդի ժամանակաշրջանում իրավունքի աղբյուրների տեսության բազմաթիվ հիմնախնդիրների շարքում քննարկվող աշխատանքում հեղինակի ուշադրության կենտրոնում է գտնվում իրավունքի ազբյուրների աստիճանակարգության (ստորադասության) և դրանց փոխհարաբերակցության հարցերը:

Մեր կարծիքով, խնդրո հարցերի ուսումնասիրությունն ունի գիտական-տեսական և գոործնական-կիրառական նշանակություն:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի նպատակն է համալաիր հետազոտության ենթարիկել իրավունքի աղբյուրների բովանդակային առանձնահատկությունները տարբեր իրավական համակարգերում:

Հետամուտ լինելով հիմնական նպատակին՝ հեղինակը փորձել է լուծել հետևյալ խնդիրները.

- ✓ բացահայտել իրավահասկացության և իրավունքի ձևի (աղբյուրի) փոխադարձ

կապը և փոխներգործությունը.

- ✓ վերլուծել իրավունքի ձևի (աղբյուրի) ընդհանուր հասկացությունը և դրա հետ կապված հիմնական տեսանկյունները.
- ✓ բացահայտել ազգային իրավունքի համակարգում իրավունքի ձևերի (աղբյուրների) աստիճանակարգը.
- ✓ բացահայտել տարբեր իրավական համակարգերում իրավունքի ձևերի (աղբյուրների) հայեցակարգերի էությունը և բովանդակությունը.
- ✓ քննարկել իրավունքի տարբեր աղբյուրների՝ դատական նախադեպի, նորմատիվ պայմանագրի, իրավական դոկտրինայի հիմնական բնութագրիչները և դրանց դերն ու նշանակությունը իրավակարգավորումների ոլորտում:

Աշխատանքի բովանդակության ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ հեղինակը իր առջև դրված խնդիրները լուծել է պատշաճ գիտական խորությամբ և մշակել են տեսական ու գործնական նշանակության առաջարկություններ և եզրակացություններ:

Քննարկվող աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ համալիր և համակարգային վերլուծության է ենթարկվել իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգը, բացահայտվել են դրանց սոցիալական, քաղաքական հիմքերը, ինչպես նաև աշխատանքում հիմնավորում է ազգային իրավական համակարգում իրավունքի համեմատաբար նոր աղբյուրների ընդգրկման անհրաժեշտությունը: Այս առումով սույն հետազոտությունն ունի որոշակի գիտական-կիրառական նշանակություն՝ ազգային իրավունքի զարգացման ճանապարհին առկա խնդիրներին գիտականորեն հիմնավորված լուծումներ գտնելու համար: Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում, ինչպես նաև հետազոտության արդյունքների հիման վրա մշակված տեսական հետևություններում, եզրահանգումներում և գործնական առաջարկություններում:

Անշուշտ դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը, այդուհանդերձ,

ունենք որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, հեղինակը ՀՀ միջազգային պայմանագրերը աստիճանակարգել է ազգային իրավունքի աղբյուրների համակարգում՝ երրորդ տեղը, համենայնդեպս այդ հենքի վրա է շարադրված ատենախոսական աշխատանքի երրորդ գլխի՝ առաջին երեք ենթագլուխները: Ճիշտն ասած՝ տեսականորեն և գործնականորեն խիստ վիճարկելի է նման ստորադասությունը: Մեր կարծիքով, ՀՀ միջազգային պայմանագրերը առնվազն պետք է դասվեն աղբյուրների երկրորդ կարգում՝ իրենց իրավաբանական ուժով և նշանակությամբ:

Հակառակ պարագայում հեղինակը պետք է առավել հիմնավորի իր տեսակետը:

Երկրորդ, հեղինակը իրավացիորեն առանձնացնելով իրավունքի աղբյուրների սոցիալական, քաղաքական և իրավական հիմքերը, այդուհանդերձ գտնում ենք, որ դրանք չինական պարիսպով տարանջատված չեն և հանդես են գալիս միասնական ձևով: Եվ այստեղ, մեր կարծիքով, հեղինակը պետք է ցույց տար դրանց փոխհամագործակության և փոխներգործության ուղիները:

Նշված նկատառումները կրում են մասնակի բնույթ և բնավ չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Քննարկվող ատենախոսական աշխատանքի արդյունքները հավաստի են և արժանահավատ, գիտականորեն հիմնավորված ու տրամաբանորեն փաստարկված, ինչն ապահովված է համապատասխան գիտական մեթոդաբանության կիրառմամբ, մասնագիտական գրականության և նորմատիվ նյութի լիարժեք օգտագործմամբ:

Սեղմագիրն ամբողջովին արտացոլում է ատենախոության հիմնական դրույթները:

Այսպիսով, գտնում եմ, որ Լևոն Սուրենի Հարությունյանի «Իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգը. Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն) թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական ու ավարտուն հետազոտություն է, այն լիովին

բավարարում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 6-րդ, 7-րդ կետերի պահանջները, իսկ հեղինակը՝ Լևոն Սուրենի Հարությունյանը արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, Հ.Մ.Ստեփանյան

Պրոֆեսոր Հովհաննես Միքայելի Ստեփանյանի ստորագրությունը հաստատում են՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար, բանաբանական գիտությունների թեկնածու՝ Հայկ Սուքիասյան